

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի անվանումը	Վճարումների/
ԼԱԲՈՐԱՆՏ ԱԽՏՈՐՈՇՈՂ	
I. Դերը	Լաբորատոր ախտորոշման մասնագետը պատրաստվում է աշխատելու որպես լաբորանտ ընդհանուր կլինիկական, հեմատոլոգիական, կենսաբանական, մանրէաբանական, իմունոլոգիական, հիստոլոգիական, սանիտարա-հիգիենիկ լաբորատորիաներում: Նրա գործունեության ոլորտը ներառում է տարբեր սեփականության ձևերի առողջապահական և սոցիալական պաշտպանության հիմնարկների լաբորատոր ծառայության համակարգը, պետասնտեսչության լաբորատորիաները, մասնագիտական կրթական հաստատությունները, և գիտահետազոտական ինստիտուտների ճյուղային լաբորատորիաները:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստական աշխատանքների իրականացում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1) ախտորոշիչ լաբորատորիաների պաշտոնական հրահանանգների, բուժ-կանխարգելիչ հաստատությունների ներքին կարգ ու կանոնի, կանոնադրության տիրապետում 2) լաբորատորոր հետազոտությունների համար աշխատատեղի նախապատրաստում 3) կլինիկո-ախտորոշիչ լաբորատորիաների գործավարության կազմակերպման հիմնական պահանջների ապահովում 4) կլինիկո-ախտորոշիչ լաբորատորիաներում սանիտարա-հակահամաճարակային ռեժիմների կանոնների պահպանում 5) անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում 6) անձնական հիգիենայի նորմերի պահպանում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կազմակերպում է կրոսեր բուժանձնակազմի աշխատանքները լաբորատորիայում 2) նախապատրաստում է աշխատատեղը տարբեր լաբորատոր հետազոտությունների համար 3) նախապատրաստում է լաբորատոր սպասքը, գործիքները և սարքավորումները լաբորատոր հետազոտության համար 4) վերցնում է կեսաբանական նյութ լաբորատոր հետազոտության համար 5) ստանում, պիտակավորում, գրանցում է լաբորատորիա մուտք գործած նյութերը և ապահովում է պահպանումը 6) կատարում է լաբորատոր սպասքի գործիքների և այլ նյութերի վարակազերծում 7) ախտահանում է օգտագործված կենսանյութերը

	8) պահպանում է հիգիենայի, անձնական հիգիենայի կանոնները, կրում է համապատասխան հանդերձանք
Խնդիրների բնագավառ 2. Լաբորատոր աշխատանքների տեխնիկայի տիրապետում	
Աշխատանքային գործընթացը	<p>1) աշխատատեղի, սպասքի գործիքների նախապատրաստում, պահպանելով անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային կանոնները,</p> <p>2) մանր տեխնիկական աշխատանքների կատարում լաբորատորիայում,</p> <p>3) տարբեր միջավայրերի ջերմաչափում,</p> <p>4) Տարբեր խտության լուծույթների տեսակարար կշռի որոշում համապատասխան աերոմետրով,</p> <p>5) ռեակտիվների մաքրում տարբեր եղանակներով,</p> <p>6) լաբորատոր սարքերի և գործիքների նախապատրաստում,</p> <p>7) մանրադիտակով աշխատելու կարողությունների տիրապետում,</p> <p>8) ֆոտոմետրով, սպեկտրոֆոտոմետրով, ժամանակակից անալիզատորներով աշխատելու կարողությունների տիրապետում,</p> <p>9) Աշխատանք տարբեր տեսակի կշեռքներով, պահպանելով աշխատանքի նորմերը,</p> <p>10) տարբեր խտության լուծույթների պատրաստում,</p> <p>11) ծավալային քննության կատարում , ճիշտ ընտրելով ինդիկատորները և աշխատանքային լուծույթները,</p> <p>12) ծավալային քննության վերլուծություն և գնահատում</p>
Կատարման չափանիշներ	<p>1)Նախապատրաստում է աշխատատեղը, սպասքը գործիքները հետազոտություններին, պահպանելով անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային կանոնները,</p> <p>2)կատարում է մանր տեխնիկական աշխատանքներ լաբորատորիայում,</p> <p>3) կատարում է տարբեր միջավայրերի ջերմաչափում,</p> <p>4) կատարում է տարբեր լուծույթների տեսակարար կշռի որոշում տարբեր աերոմետրով,</p> <p>5) կատարում է ռեակտիվների մաքրում տարբեր եղանակներով,</p> <p>6)Նախապատրաստում է սարքերը և գործիքները լաբորատոր հետազոտություններին,</p> <p>7) աշխատում է մանրադիտակով,</p> <p>8) աշխատում է ֆոտոմետրով, սպեկտրոֆոտոմետրով, ժամանակակից անալիզատորներով,</p>

	<p>9)աշխատում է տարբեր տեսակի կշեռքներով, պահպանում է աշխատանքի նորմերը,</p> <p>10)կատարում է լուծույթների պատրաստման համար լուծվող նյութի համապատասխան հաշվարկ,</p> <p>11)պատրաստում է տարբեր խտության լուծույթներ,</p> <p>12)պատարում է ծավալային քննություն , ճիշտ ընտրելով ինդիկատորները և աշխատանքային լուծույթները,</p> <p>13)կատարում է ծավալային քննության վերլուծություն և գնահատում:</p>
--	--

Խնդիրների բնագավառ 3. Ընդհանուր կլինիկական հետազոտություններ

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1)կլինիկական լաբորատորիաների կառուցվածքի, հագեցվածության մասին գիտելիքների , հետազոտությունների որակի հսկողության մեթոդների տիրապետում,</p> <p>2) ռեակտիվների, լաբորատոր սպասքի, սարքավորումների նախապատրաստում լաբորատոր հետազոտություններին</p> <p>3) հետազոտվող կենսաբանական նյութի ստացում, գրանցում պիտակավորում,</p> <p>4)մեզի ֆիզիկական, քիմիական հատկությունների ուսումնասիրման հիմնական մեթոդների, մանրադիտակային (կողմնորոշիչ և քանակական) քննության կարողությունների տիրապետում,</p> <p>5)ստամոքսահյուսվածքի և 12մ աղու հյուսվածքի ֆիզիկական, քիմիական հատկությունների ուսումնասիրման հիմնական մեթոդների, մանրադիտակային քննության կարողությունների տիրապետում,</p> <p>6) կղանքի ֆիզիկական, քիմիական հատկությունների ուսումնասիրման հիմնական մեթոդների, մանրադիտակային հետազոտության կարողությունների տիրապետում,</p> <p>7) խորխի հետազոտության (ֆիզիկական հատկություններ, մանրադիտակային հետազոտություն) կարողությունների տիրապետում,</p> <p>8)ողնուղեղային հեղուկի ֆիզիկական, քիմիական հատկությունների ուսումնասիրման հիմնական մեթոդների, մանրադիտակային քննության (կողմնորոշիչ և քանակական) կարողությունների տիրապետում,</p> <p>9)տրանսուղատների և էքսուղատների ֆիզիկական, քիմիական հատկությունների ուսումնասիրման մեթոդների, մանրադիտակային քննության կարողությունների տիրապետում,</p> <p>10) մաշկից, եղունգներից, մազերից վերցված հետազոտվող</p>
---------------------------------------	--

	<p>Նյութի մանրադիտակային քննության կարողությունների տիրապետում,</p> <p>11) սեռական օրգաններից ստացված արտադրուկի հետազոտման մեթոդների կարողությունների տիրապետում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) գիտի կլինիկական լաբորատորիայի կառուցվածքը, հագեցվածությունը, հետադոտությունների որակի հսկողության մեթոդները,</p> <p>2) կարող է նախապատրաստել աշխատատեղը տարբեր հետազոտությունների համար,</p> <p>3) կարող է վերցնել, ընդունել, գրանցել, պիտակավորել հետազոտվող նյութը,</p> <p>4) տիրապետում է վարակված նյութի հետ աշխատելու տեխնիկային և ախտահանման մեթոդներին, պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները,</p> <p>5) կատարում է մեզի ֆիզիկական և քիմիական հատկությունների որոշում, նստվածքի մանրադիտակային քննություն , քիմիական հատկությունների լրացուցիչ քննություն (լեղապինգմենտների, կետոնային մարմինների, արյան պիգմենտի և այլն), մեզի նստվածքի քանակական քննություն, մեզի քննություն ժամանակակից անալիզատորներով,</p> <p>6) կատարում է ստամոքսահյութի ֆիզիկական և քիմիական հատկությունների ուսումնասիրում, ֆերմենտատիվ ակտիվության որոշում, նստվածքի մանրադիտակային հետազոտում,</p> <p>7) կատարում է 12-մ աղու հյութի ֆիզիկական և քիմիական հատկությունների ուսումնասիրում, լեղու մանրադիտակային հետազոտություն,</p> <p>8) կատարում է կղանքի, ֆիզիկական և քիմիական հատկությունների ուսումնասիրում, պատրաստում է պատրաստուկներ և մանրադիտակում է,</p> <p>9) կատարում է ողնուղեղային հեղուկի ֆիզիկական և քիմիական հատկությունների ուսումնասիրում, հաշվում է ձևավոր է լեմենտները նստվածքում, գնահատում է արդյունքները,</p> <p>10) կատարում է էքսուդատների և տրանսուդատների ֆիզիկական և քիմիական հատկությունների ուսումնասիրում, պատրաստում է պատրաստուկներ մանրադիտակային հետազոտության համար,</p> <p>11) կատարում է խորխի ֆիզիկական և քիմիական հատկությունների ուսումնասիրում, պատրաստում է</p>

	<p>պատրաստուկներ մանրադիտակելու և մանրեաբանական հետազոտության համար,</p> <p>12) կատարում է սեռական օրգանների արտադրուկի հետազոտում, պատրաստում է պատրաստուկներ, որոշում է հեշտոցի մաքրության աստիճանը, կատարում է Էակոլյատի հետազոտություն,</p> <p>13) աշխատում է սնկերով վարակված հետազոտման նյութի հետ, պատրաստում է նատիվ պատրաստուկներ մաշկից, մազերից, եղունգներից վերցված նյութից, մանրադիտակում է, գնահատում է արդյունքները :</p>
--	--

Խնդիրների բնագավառ 4. Արյան ընդհանուր կլինիկական հետազոտություն

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ol style="list-style-type: none"> 1) աշխատատեղի, ռեակտիվների, սպասքի գործիքների, սարքերի նախապատրաստում, 2) ընդհանուր կլինիկական հետազոտության համար արյուն (մազանոթային, երակային) ստացում, 3) արյան ընդհանուր կլինիկական հետադոտության պարտադիր քննությունների կատարում, 4) արյան ընդհանուր կլինիկական հետադոտության լրացուցիչ քննությունների կատարում, 5) ժամանակակից հեմատոլոգիական անալիզատորներով աշխատելու կարողություն, 6) արյան խմբերի որոշում տարբեր եղանակներով, 7) ռեզուս գործենի որոշում տարբեր եղանակներով, 8) կենսաբանական համատեղելիության որոշում
---------------------------------------	---

<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստում է աշխատատեղը արյան ընդհանուր կլինիկական հետազոտության համար, 2) վերցնում է մազանոթային արյուն հետազոտության համար, պահպանելով անվտանգության տեխնիկայի և հիգիենայի կանոնները, 3) կատարում է պարտադիր քննությունները (ԷՆԱ, հեմոգլոբին, Էրիթրոցիտների, Լեյկոցիտների քանակի որոշում, գույնի ցուցանիշի որոշում, քուկների պատրաստում, ֆիքսում, ներկում) և գնահատում է արդյունքները, 4) կատարում է լրացուցիչ քննությունները (Լեյկոբանաձևի հաշվում, թրոմբոցիտների, ռետիկուլոցիտների, հեմատոկրիտ մեծության, Էրիթրոցիտների օսմոտիկ ռեզիստենտության արյան մակարդելիության ժամանակի, արյունահոսության տևողության որոշում) և գնահատում է արդյունքները, 5) աշխատում է ժամանակակից հեմատոլոգիական անալիզատորներով, 6) կատարում է արյան խմբերի որոշում ստանդարտ
-----------------------------------	--

	<p>շիճուկներով և ստանդարտ էրիթրոցիտար մասսայով,</p> <p>7) կատարում է արյան խմբերի որոշում ցուլիկոն պատրաստուկներով և խաչածն եղանակով,</p> <p>8) կատարում է ռեզուս գործոնի որոշում ստանդարտ հակառեզուս շիճուկներով և ցուլիկոն հակառեզուս շիճուկներով</p> <p>10) գնահատում է փորձերի արդյունքները և բնութագրում է սխալների պատճառները</p> <p>11) կատարում է համապատասխան գրանցումներ անհրաժեշտ փաստաթղթերում</p> <p>12) պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները, վարակազերծում է հետազոտված նյութը:</p>
--	---

Խնդիրների բնագավառ 5. Կենսաքիմիական հետազոտություններ

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ol style="list-style-type: none"> 1) աշխատատեղի, սպասքի, գործիքների, սարքերի նախապատրաստում կենսաքիմիական հետազոտությունների, 2) հետազոտվող նյութի ստացում և նախապատրաստում կենսաքիմիական հետազոտություններին (ստանալ արյան շիճուկ, պլազմա), 3) սպիտակուցային փոխանակությունը ուսումնասիրող փորձերի կատարում, 4) ածխաջրատային փոխանակությունը ուսումնասիրող փորձերը կատարում, 5) ճարպային փոխանակությունը ուսումնասիրող փորձերի կատարում, 6) ջրա-աղային փոխանակությունը ուսումնասիրող փորձերի կատարում, 7) արյան մակարդեղիությունը ուսումնասիրող փորձերի կատարում, 8) լյարդի ֆունկցիոնալ վիճակը ուսումնասիրող փորձերի կատարում, 9) փորձերի արդյունքների գնահատում, հաշվի առնելով ֆիզիոլոգիական նորմերը, 10) հետազոտված նյութի վարակազերծում(արյուն, մեզ, ողնուղեղային հեղուկ և այլն),
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստում է աշխատատեղը, սպասքը, սարքերը, գործիքները, կենսաքիմիական հետազոտություններին, 2) վերցնում և նախապատրաստում է հետազոտվող նյութը կենսաքիմիական հետազոտություններին, 3) կատարում է սպիտակուցային փոխանակությունը ուսումնասիրող կենսաբանական փորձերը և գնահատում է

	<p>արդյունքները,</p> <p>4) կատարում է ածխաջրատային փոխանակությունը ուսումնասիրող կենսաբանական փորձերը և գնահատում է արդյունքները,</p> <p>5) կատարում է ճարպային փոխանակությունը ուսումնասիրող կենսաբանական փորձերը և գնահատում է արդյունքները,</p> <p>6) կատարում է ջրա-աղային փոխանակությունը ուսումնասիրող կենսաբանական փորձերը և գնահատում է արդյունքները,</p> <p>7) կատարում է արյան մակարդեղիությունը ուսումնասիրող կենսաբանական փորձերը և գնահատում է արդյունքները,</p> <p>8) աշխատում է կենսաքիմիական հետազոտությունների անալիզատորներով, գնահատում է ստացված արդյունքները</p> <p>9) կատարում է հետազոտված նյութի վարակագրծում (արյուն, մեզ, ողնուղեղային հեղուկ և այլն)</p> <p>10) տիրապետում է աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոններին:</p>
--	---

Խնդիրների բնագավառ 6. Մանրեաբանական հետազոտություններ

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1) մանրեաբանական, շճաբանական հետազոտությունների համար սննդային միջավայրերի, գործիքների և սարքերի նախապատրաստում,</p> <p>2) մարդուց, արտաքին միջավայրի օբյեկտներից, սննդանյութերից կլինիկական հետազոտման նյութի ստացում, ընդունում, գրանցում, նախապատրաստում,</p> <p>3) մարդուց, արտաքին միջավայրի օբյեկտներից, սննդանյութից վերցված նմուշների մանրեաբանական հետազոտության կատարում,</p> <p>4) շճաբանական հետազոտություններ կատարում տարբեր եղանակներով,</p> <p>5) վարակային իմունաբանական հետազոտությունների կատարում,</p> <p>6) օգտագործված հետազոտման նյութի, լաբորատոր սպասքի, գործիքների, աշխատատեղի ախտահանում, մանրեագրծում,</p> <p>7) հետազոտությունների արդյունքների գնահատում,</p> <p>8) համապատասխան փաստաթղթերը լրացում,</p> <p>9) աշխատանքի անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային կանոնների պահպանում</p>
---------------------------------------	--

<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ընդունում, գրանցում, վերցնում է կլինիկական հետազոտման նյութ մարդուց, արտաքին միջավայրի</p>
-----------------------------------	--

	<p>օբյեկտներից, սննդանյութերից,</p> <p>2) պատրաստում է հետազոտման նյութը, սննդային միջավայրերը, գործիքները և սարքերը մանրէաբանական, շճաբանական հետազոտությունների համար,</p> <p>3) կատարում է պացիենտից, վերցված հետազոտման նյութի մանրէաբանական հետազոտություն,</p> <p>4) կատարում է արտաքին միջավայրի օբյեկտներից, վերցված նմուշների մանրէաբանական հետազոտություն,</p> <p>5) կատարում է, սննդանյութից վերցված նմուշների մանրէաբանական հետազոտություն,</p> <p>6) կատարում է շճաբանական հետազոտություններ տարբեր եղանակներով,</p> <p>7) կատարում է իմունաբանական հետազոտություններ,</p> <p>8) կատարում է մանրէների առանձին խմբերի մանրէաբանական հետազոտություն,</p> <p>9) կատարում է վիրուսաբանական հետազոտություններ,</p> <p>10) պահպանում է 3-րդ, 4-րդ խմբի պաթոգենության միկրոօրգանիզմների հետ աշխատանքի կազմակերպման պահանջները,</p> <p>11) գնահատում է կատարված հետազոտությունների արդյունքները,</p> <p>12) լրացնում է համապատասխան փաստաթղթերը</p> <p>13) կատարում է օգտագործված հետազոտման նյութի, լաբորատոր սպասքի, գործիքների, աշխատատեղի ախտահանում, մանրէազերծում,</p> <p>14) պահպանում է աշխատանքի անվտանգության տեխնիկայի և հակահիդեհային անվտանգության կանոնները:</p>
--	---

Խնդիրների բնագավառ 7. Իմունոլոգիական հետազոտություններ

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1) աշխատատեղի, ռեակտիվների, սպասքի, գործիքների և սարքերի նախապատրաստումը իմունոլոգիական հետազոտությանը,</p> <p>2) հետազոտման նյութի նախապատրաստումը իմունոլոգիական քննության համար,</p> <p>4) իմունոլոգիական հետազոտությունների կատարում,</p> <p>5) կատարված հետազոտությունների գնահատում,</p> <p>6) օգտագործված հետազոտման նյութի, սպասքի, գործիքների, սարքերի, աշխատատեղի ախտահանում, մանրէազերծում,</p> <p>7) հետազոտման արդյունքների գրանցում</p>
---------------------------------------	--

	համապատասխան փաստաթղթերում
Կատարման չափանիշներ	<p>1) Նախապատրաստում է աշխատատեղը, սպասքը, գործիքները, սարքերը հետազոտմանը,</p> <p>2) ընդունում, գրանցում, նախապատրաստում է հետազոտվող նյութը իմունոլոգիական հետազոտության,</p> <p>3) կատարում է իմունոլոգիական հետազոտությունները,</p> <p>4) գնահատում է կատարված հետազոտությունները,</p> <p>5) կատարում է համապատասխան գրանցումները,</p> <p>6) կատարում է օգտագործված հետազոտման նյութի, սպասքի, գործիքների, սարքերի, աշխատատեղի ախտահանում, մանրեագերծում:</p>
Խնդիրների բնագավառ 8. Սանիտարա-հիգիենիկ լաբորատոր հետազոտություններ	
Աշխատանքային գործընթացը	<p>1) սան-հիգիենիկ լաբորատորիայի կառուցվածքին, շահագործմանը և կահավորմանը ներկայացվող պահանջների մասին գիտելիքների տիրապետում,</p> <p>2) արտաքին միջավայրի օբյեկտների և մանրանյութերի նմուշների ընտրություն, տեղափոխում, պահպանում,</p> <p>3) արտաքին միջավայրի օբյեկտների և մանրանյութերի օրգանոլեպտիկ, ֆիզիկական, քիմիական հատկությունների հետազոտությունների կատարում,</p> <p>4) օգտագործված հետազոտման նյութի, սպասքի, գործիքների, սարքերի, աշխատատեղի, պաշտպանության միջոցների ախտահանում, մանրեագերծում,</p> <p>5) հետազոտման արդյունքների գնահատում և վերլուծություն,</p> <p>6) տարբեր նշանակության օբյեկտների հատակագծմանը, միկրոկլիմային, ջրռուցմանը, լուսավորվածությանը, օդափոխությանը ներկայացվող սանիտարա-հիգիենիկ պահանջների ուսումնասիրում և ընթացիկ հսկողություն,</p> <p>7) բնական էկոհամակարգերի գործառույթների մեխանիզմի ուսումնասիրում,</p> <p>8) սանիտարա-հիգիենիկ հետազոտությունների իրավական նորմերի պահպանում:</p>
Կատարման չափանիշներ	<p>1) սան-հիգիենիկ լաբորատորիայի կառուցվածքի շահագործմանը և կահավորմանը ներկայացվող պահանջների ուսումնասիրում,</p> <p>2) կատարում է արտաքին միջավայրի օբյեկտների և մանրանյութերի նմուշների ընտրություն, տեղափոխում, պահպանում,</p> <p>3) կատարում է արտաքին միջավայրի օբյեկտների և մանրանյութերի օրգանոլեպտիկ, ֆիզիկական, քիմիական</p>

	<p>հատկությունների հետազոտություն,</p> <p>4) կատարում է օգտագործված հետազոտման նյութի, սպասքի, գործիքների, սարքերի, աշխատատեղի, պաշտպանության միջոցների ախտահանում, մանրեագերծում,</p> <p>5) կատարում է հետազոտման արդյունքների գրանցում և վերլուծություն,</p> <p>6) կատարում է համապատասխան փաստաթղթերի լրացում,</p> <p>7) պահպանում է լաբորատորիայի աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնները,</p> <p>8) պահպանում է անձնական հիգիենայի կանոնները:</p>
<p>Խնդիրների բնագավառ 9. Հյուսվածքաբանական հետազոտություններ</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1) հյուսվածքաբանական լաբորատորիայի կառուցվածքի մասին գիտելիքների տիրապետում,</p> <p>3) աշխատատեղի, սպասքի, գործիքների, սարքերի, ռեակտիվների նախապատրաստում հյուսվածքաբանական հետազոտության,</p> <p>2) հյուսվածքաբանական քննության համար կենդանի օրգանիզմի տարբեր օրգաններից, դիակից, լաբորատոր կենդանիներից հետազոտման նյութի ստացում,</p> <p>4) հետազոտվող նյութի նախապատրաստում հյուսվածքաբանական հետազոտության,</p> <p>5) հյուսվածքաբանական պատրաստուկների պատրաստման տեխնիկայի տիրապետում,</p> <p>6) հետազոտված նյութի մնացորդի պահպանման աշխատանքների տիրապետում,</p> <p>7) համապատասխան փաստաթղթերի ձևակերպում և լրացում,</p> <p>8) օգտագործված հետազոտման նյութի, սպասքի, գործիքների, սարքերի, աշխատատեղի, պաշտպանության միջոցների ախտահանում, մանրեագերծում,</p> <p>9) աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) նախապատրաստում է աշխատատեղը, լաբորատոր սպասքը, գերծիքները և սարքերը հետազոտության համար,</p> <p>2) ընդունում և նախապատրաստում է հետազոտվող նյութը հյուսվածքաբանական հետազոտության համար,</p> <p>3) կատարում է հետազոտվող նյութի համապատասխան վերամշակում,</p> <p>4) պատրաստում է հյուսվածքաբանական</p>

	<p>պատրաստուկներ, ներկում է տաբեր եղանակներով,</p> <p>5) գնահատում է հյուսվածքաբանական պատրաստուկների որակը,</p> <p>6) նախապատրաստում է պահեստավորման հետազոտման նյութի մնացորդը,</p> <p>7) կատարում է բիոպտիկ, վիրահատական նյութի ընդունում, գրանցում, պիտակավորում,</p> <p>8) լրացնում է համապատասխան փաստաթղթերը, գրանցում է հետազոտման արդյունքները,</p> <p>9) կատարում է օգտագործված հետազոտման նյութի, սպասքի, գործիքների, սարքերի, աշխատատեղի, պաշտպանության միջոցների ախտահանում, մանրեագերծում,</p> <p>10) պահպանում է անձնական հիգիենայի և տեխնիկայի անվտանգության կանոնները</p>
<p>Խնդիրների բնագավառ 11. Բժշկական մակաբուժաբանություն, միջատաբանություն</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1) մակաբույծների զարգացման ցիկլերի, մակաբույծ նախակենդանիների, որդերի բնութագրում, դասակարգում,</p> <p>2) հողվածոտանիների կենսաբանական հատկությունների բնութագրում, դասակարգում պայքարի միջոցների տիրապետում,</p> <p>3) հիվանդից հետազոտման նյութի վերցման, վարակիչ նյութի հետ աշխատելու տեխնիկայի տիրապետում,</p> <p>4) մակաբույծների լաբորատոր ախտորոշման ունակությունների տիրապետում,</p> <p>5) արյան հաստ կաթիլի պատրաստում և ներկում</p> <p>6) մանրադիտակի տակ հողվածոտանիների, նախակենդանիների ներկայացուցիչներին տարբերակում,</p> <p>7) կղանքի մեջ մակաբույծ որդերի ձվիկների հայտնաբերում,</p> <p>8) հետազոտվող նյութի, սպասքի, գործիքների ախտահանում,</p> <p>9) համապատասխան փաստաթղթերի ձևակերպում և լրացում</p> <p>10) անձնական հիգիենայի և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) տիրապետում է հիվանդից հետազոտման նյութի վերցման տեխնիկային,</p> <p>2) տիրապետում է վարակված նյութի հետ աշխատանքին,</p> <p>3) ընդունում և հաշվառում է հետազոտվող նյութը,</p> <p>4) տիրապետում է մակաբույծների, հողվածոտանիների,</p>

	<p>Նախակենդանիների ուսումնասիրման լաբորատոր ախտորոշման մեթոդներին,</p> <p>5) պատրաստում և ներկում է արյան հաստ կաթիլը,</p> <p>6) տարբերակում է մանրադիտակի տակ հողվածոտանիների, նախակենդանիների ներկայացուցիչներին,</p> <p>7) հայտնաբերում է կղանքում մակաբույծ որդերի ձվիկները,</p> <p>8) ախտահանում է ուսումնասիրված հետազոտման նյութը, սպասքը, գործիքները,</p> <p>9) լրացնում է համապատասխան փաստաթղթերը,</p> <p>10) պահպանում է անձնական հիգիենայի և տեխնիկայի անվտանգության կանոնները:</p>
<p>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</p>	<p>Լաբորանտ ախտորոշողը պատասխանատու է</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատատեղի նախապատրաստման • Օգտագործվող ռեակտիվների, գործիքների, սարքերի, հետազոտման մեթոդների ընտրության • Իր կողմից կատարված հետազոտությունների որակի • Օգտագործված կենսաբանական նյութի թափոնների վնասագերծման, հականեխման • Շրջակա միջավայրի և անձնական հիգիենայի կանոնների պահպանման • Աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման • Նյութական միջոցների արդյունավետ օգտագործման • Հետազոտվողին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու համար <p>Լաբորանտ ախտորոշողը աշխատանքային պարտականությունների շրջանակներում սխալ գործողության հետևանքով պացիենտի առողջության խաթարման կամ մահվան դեպքում պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:</p>
<p>IV. Լեզուները</p>	<ul style="list-style-type: none"> - Հայերեն- գերազանց - Ռուսերեն- բավարար - Անգլերեն- բավարար - Լատիներեն-լավ
<p>V. Համակարգիչը</p>	<ul style="list-style-type: none"> - MS Word – լավ - MS Excel – բավարար - Internet – լավ

<p>VI. Գիտելիքները</p>	<ul style="list-style-type: none"> - Լաբորանտը իր մասնագիտական գործունեության համար պետք է գիտելիքներ ունենա - Հայաստանի Հանրապետության առողջապահության օրենսդրական և իրավական ակտերը, - անատոմիա և ֆիզիոլոգիայից, լատիներեն լեզու բժշկական տերմինաբանությամբ, - դեղաբանությունից, դեղերի ազդեցությունը հետազոտությունների արդյունքների վրա - անօրգանական, օրգանական, անալիտիկ քիմիայից, - ախտաբանական անատոմիայից, - բժշկական գենետիկայից, - աղետների բժշկության հիմունքներից, - ընդհանուր կլինիկական հետազոտությունների մեթոդներից - հեմատոլոգիական հետազոտությունների մեթոդներից - կենսաքիմիական հետազոտությունների մեթոդներից - մանրէաբանության, համաճարակաբանության հիմունքներից - մանրէաբանական հետազոտության մեթոդներից - սանիտարա-հիգիենիկ հետազոտման մեթոդներից - հյուսվածքաբանական հետազոտությունների մեթոդներից - բժշկական մակաբուժաբանություն և միջատաբանությունից - առաջին բուժօգնությունից
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<ul style="list-style-type: none"> - վերլուծել ստեղծված իրավիճակը և կայացնել որոշումներ մասնագիտության լիազորությունների և իրավասության սահմաններում, - տիրապետել հաղորդակցման հմտություններին, սպասարկման ժամանակակից մեթոդներին, - կազմակերպել կրտսեր բժշկական անձնակազմի աշխատանքները լաբորատորիաներում, - նախապատրաստել աշխատատեղը կլինիկական, հեմատոլոգիական, կենսաքիմիական, հյուսվածքաբանական, մանրէաբանական, իմունաբանական և այլ լաբորատոր հետազոտություններին, - տիրապետել ռեակտիվների պատրաստման և պահպանման հմտություններին, - լաբորատոր սպասքի, գործիքների սարքերի շահագործման հմտություններին, - ստանալ, ընդունել գրանցել և նախապատրաստել

	<p>հետազոտվող կեսաբնական նյութը լաբորատոր քննություններին,</p> <ul style="list-style-type: none"> - կատարել անհրաժեշտ հետազոտությունները, վերլուծել, գնահատել կատարված աշխատանքը, - տիրապետել հետազոտությունների կատարման ժամանակակից մեթոդներին, - տարբերակել լաբորատոր հետազոտությունների նորմալ և ախտաբանական ցուցանիշները, - տալ հետազոտությունների որակական և քանակական գնահատականը, հիմնվելով արդյունքների վրա, - տիրապետել լաբորատորիայի հաշվառա- հաշվետվական փաստաթղթերի լրացման կարգին, - կատարել օգտագործված հետազոտման նյութի, սպասքի, գործիքների, սարքերի, աշխատատեղի, պաշտպանության միջոցների ախտահանում, մանրեագրեծում, - պահպանել սանիտարա-հակահամաճարակային ռեժիմների կանոնները կլինիկո-ախտորոշիչ լաբորատորիաներում, - պահպանել աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնները, - արտակարգ իրավիճակներում կատարել պացիենտի վիճակի գնահատում և ցուցաբերել նախաբժշկական օգնություն, - կիրառել նոր տեղեկատվական տեխնոլոգիական մեթոդներ, հնարքներ և միջոցներ, իրականացնել, տեղեկատվության փոխանցում և պահպանում, - բարձրացնել գիտելիքների, կարողությունների, հմտությունների մասնագիտական մակարդակը,
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ, - կառավարել սթրեսը և ժամանակը, առաջացած խնդիրներին և կոնֆլիկտներին տալ համապատասխան լուծումներ, - կարողանալ նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսությունները և քննարկումները, - լինել հաղորդակցվող, թիմային աշխատանքի պատրաստ, նորին ձգտող, ստեղծագործական մտածելակերպ ունեցող, համբերատար, պարտաճանաչ: - լինել պարկեշտ, անկաշկանդ, պատասխանատու, կարգապահ, մաքրասեր, տեղեկացված, համեստ,

	<p>հարգալից, ընկերասեր:</p> <p>- ունենալ մասնագիտական ոլորտում ինքնակատարելագործման ձգտում:</p>
--	---